

ԱՊՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՓԱՅԻՐԱԲԱՐԵՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅՑ

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Դ.

7 ՇՈՒՂԻՍ 1878

ԻՐԱՆԻՆԻ և ՊԱՐՏՎԱՆ

ԿՈՍՏԱՆՆՈՒԳՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ և Մ. ՆՆՏԻՍԻԱՆ

— 1878 —

ՁԷ ՌԵԼԻԳԻՈԶԻԱԿԱՆ ԴԻԻԱՆ

ՅԱՐԱՐԵՐՈՒԹՒԱՆ ԴԻՉԱՆ

ԲՆՅՈՒՄ 1878 ՆՄԻՆ

ՀԻՍՏ Դ.

7 ՅՈՒԼԻՍ 1878

ՆԱԽԱԴԱՀ . (առժամեայ) — Գեր. Խորէն Եպիսկոպոս Մխիթարեան :
ԱՏԵՆԱՊԵՏ . — Ստեփան փաշա Ասլանեան :

ԱՂԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԷՔ

[illegible]

61 Գարութն Նորատունկի Բ 3	(Ե. Վ. Ի. Ս. Կ.)	Հ. Ե. Զ.
62 Գրիգոր Մարկոսեան Բ 3	Ս. Բ. Բ. Բ.	115
Միլենի-Է	85 Ա. Բ. Բ. Բ.	116
63 Կարապետ Պէրեանց (վսճ)	86 Ա. Բ. Բ. Բ.	Թ. Բ. Բ. Բ.
64 Գաղութ Կոստանդեան Բ 4	87 Ե. Բ. Բ. Բ.	117 Տիգրան Անանեան
65 Գաղութ. Նորատունկեան Բ 3	88 Միհայիլ Զաքարեան Բ 2	Կ. Բ. Բ. Բ.
66 Տիգրան Երևանեան	89 Գաղութ Բաղդատեան	118 Գ. Բ. Բ. Բ.
67	90 Գաղութ Ամասեան Բ 4	Խ. Բ. Բ. Բ.
Պէրեան Է. Գ. Բ. Բ. Բ.	91 Նազարեթ Շահապեան Բ	119 Գ. Բ. Բ. Բ.
68 Գ. Միհայիլ-Գ. Բ. Բ. Բ.	92 Գարութիւն Թիւրեան	120 Գ. Բ. Բ. Բ.
(Գ. Վ. Ի. Ս. Կ.)	93 Գաղութ Ա. Բ. Բ. Բ.	121 Ստեփան Գաղատեան Բ. Գ
Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	94	Տ. Բ. Բ. Բ.
69 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	95 Ա. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	122 Ն. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
70 Ստեփան Պէրեանց Բ 2	96 Սաղաթուր Միհայիլեան Բ 4	123
Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	97 Ս. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	Տ. Բ. Բ. Բ. Բ.
71 Կարապետ Շահապեան	98 Ա. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ
72 Միհայիլ Մարտեան	99 Սարգիս Ա. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	125 Միհայիլ Իսկէնտէրեան Բ
Ն. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	100	Տ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
73 Գաղութ Ե. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	126 Միհայիլ Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
Ե. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	101	127 Ս. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
74 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	102 Մ. Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	128
Ե. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	103 Ս. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	129
75 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	104 Կարապետ Ա. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	130 Միհայիլ Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
76 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	105 Պ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	131
77 Ա. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	106	132 Ա. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
Հ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	107 Կարապետ Ս. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	133 Հ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
78 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	108	134
Ն. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	109 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	135
79 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	110	136 Մ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
Պ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	111 Հ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	137 Լ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
80 Միհայիլ Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	112 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	138 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
81 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	113 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	139 Պ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.
82 Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	114	140
Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	115 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.	
83 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.		
84 Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.		

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Ուղերձ 'ի պատասխանի Նախագահական ճառին :
Բ. Տեղեկագիր Իրաւասութեան դիւանի 'ի վերայ հրաժարականի Արօն. և Քաղ. Ժողովոյ :
Գ. Տեղեկագիր Մայր դիւանի, բացակայ և հրաժարելի Եկեղեցական և Աշխարհական երեսփոխանաց վրայ :
Դ. Տեղեկագիր Նախաձեռնութեան դիւանի, 'ի վերայ առաջարկութեան յետաձգման Ազգային Ժողովոյ նիստերուն :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատենան ըրաջողեցաւ ժամը 7 ին 'ի ներկայութեան 37 երեսփոխանաց, որոց վերջին թիւն յանգեցաւ 30 ի :
Ըստ որում Ամեն. Ս. Պատրիարքն բացակայ կը գտնուէր, նորին Սրբազնութեան խորհրդական Միսիթարեան Խորէն եպիսկոպոս հրաւիրուեցաւ նախագահել այսօրուան նստին :
Նախընթաց Բ. և Գ. նստերու առեւտագրութիւնը տպարանէն նոր ելած և միայն մէկ քանի ժամ յառաջ ցրուած ըլլալուն, երեսփոխանաց ոմանց առաւելութեան վրայ թէ՛ ժամանակ չեն ունեցած կարդալու, որոշուեցաւ անոնց դիտողութեան երթարկումն ու վաւերացումը յաջորդ նստին թողուլ :
140

I

ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ատենապետ փառան ծանոյց որ ազգային երեսփոխաններէն Նուրեան Է. Բ. մէկ երկու ամսուան համար Եւրոպա ճամբորդութիւն ընելու պատճառաւ բացակայ մնալու ստիպուած ըլլալը գրով յայտնած է :
Նոյնպէս քանի մը երեսփոխաններ անձնական տկարութեան պատճառաւ բացակայ մնալու ստիպուած ըլլալին յայտնեց, որք են.
Մատթէոս Եպիս. Իզմիրեան
Գարեգին Է. Բ. Միհայիլեան
Մեղրոն Գ. Բ. Գաղատեան
Ատենապետ փառան՝ նախընթաց նստին Մայր դիւանի կողմէ բացակայ և հրաժարելի երեսփոխանաց մասին խոստացուած տեղեկագիրն պատրաստ ըլլալը յայտնելով, զայն կարդալէ և հակիրճ բացատրութիւն մը իր

կողմէ յարելէ ետեւ, անոր վիճաբանութիւնը վերապահեց իր կարգին, ըստ որում արդէն օրակարգն անցած էր, և անցաւ դիւանին վրայ գտնուած ուրիշ գրութեանց ընթերցման:

2

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Վարչութեան խառն ժողովոյ կողմէ մատուցեալ յետագայ տեղեկագիրը կարդացուեցաւ:

Վսեմաշուք Ատենապետ փաշա Ազգային Ժողովոյ.

Ազգային կեդր. Վարչութեան խառն ժողովոյ երբեմն կառավարութեան միջոցաւ Սէն Բերուելով Արմաշու վանքը դրուած և վերջերս Արմաշէն Մայրաքաղաքս եկած Սսեցի Նիկողայոս Ռուբինեան եպիսկոպոսէն յետագայ խնդրագիրն ստացաւ:

« Ստորագրեալս հրաժարելով իսպառ կիրիկիոյ կաթողիկոսական պաշտօնէն, ներկայ հրաժարագիրս կուտամ կեդրոնական վարչութեան և կը խոստանամ ազգին ժողովոց, որ բնաւ ու իցէ պատճառաւ կաթողիկոսական խնդիր չպիտի յարուցանեմ մինչև կենացս վերջին կէտն, ուստի կը խնդրեմ Ազգային Վարչութեանէն՝ որ հաճի թոյլ տալ ինձ երթալ իմ հայրենի տանս մէջ բնակիլ մինչև իմ մնացեալ կեանքս կնքելս »:

27 Յունիս 1878 (Ստորագրութիւն)

Հրաժարեալ ի կաթողիկոսութենէն Նիկողայոս Եղիշի-Պապ Ռուբինեան

Խառն ժողովս յիշեալ եպիսկոպոսին սոյն հրաժարականին վրայ՝ իւր հայրենի տունը փրթալու խնդիրը մերժելու պատճառ մը չտեսնելով, արժան դատեց իւր ուղած

թոյլտուութիւնն ընել. և որպէս զի իւր ուղեորութեան դէմ կառավարութեան կողմէ ու է արգելք մը չպատահի, հարկ դատեց խառն ժողովս խնդիրն իւր պարագայիւքը տեղեկագրել Բ. Դրան ի գիտութիւն:

Խառն ժողովս նոյնպէս կը փութայ սոյն խնդիրը ներկայ յայտագրով բերել ի ծանօթումն Ազգ. պատկառելի Ժողովոյ:

7 Յունիս 1878 Մնամք խորին յարգանքով Պատր. Հայոց ի դիմաց կրօնակ. ժողովոյ

Կ. Պօլիս ԱՏԵՆԱՊԵՐ ԱՏԵՆԱՊԵՏ ՅԷԴԷՎ. ԱԶԳ. ԽՐԷՆ ԵՊԷՆԻՊԱՓՈՒՆԷՆ ՄԷԷՆԷՐԷՆ

Ի դիմաց Քաղ. ժողովոյ ԱՏԵՆԱՊԵՐ ԱՏԵՆԱՊԵՏ Մ. ԱԷԷՆԷՆ Ա. Մ. ՔՅԷՆԷՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահաւասիկ խնդիր մը որ կը բերուի ժողովոյս ի գիտութիւն միայն ինչպէս Բ. Դրան ալ հաղորդուած է. Վարչութիւնն այս տեղեկագրով գրեթէ իր համարատուութեան մէկ կէտն այս օրունէ կը կատարէ. եթէ սոյն խնդրոց վրայ վիճաբանութեան տեղի տրուի և չկրնանք նախաժողով մը դաշն դիւանէն վերցունել, պիտի պարտաւորինք յղել նախաքննութեան: Այս կէտին վրայ երկու հոգի խօսեցունելու պայմանաւ պատրաստ եմ խօսք տալ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ասի բոլորովին Վարչութեան պատկանեալ գործ մ'է, Սսեցի Նիկողայոս եպիսկոպոսի վրայ հոս խօսելու բան մը չունինք, ուստի պէտք է յղել Վարչութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ԲԱՇԱ. — Ըսել կ'ուզէք որ արձանագրենք ու անցնինք:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ ԷՖ. — Վարչութիւնն իր տեղեկագրին մէջ հրաժարական բառ մը դրած է Նիկողայոս եպիսկոպոսի մասին, Ազգը զայն կաթողիկոս ճանչցած չէ արդէն՝ որպէս զի հրաժարականն ալ ընդունի: Այս

կէտին վրայ եթէ վիճաբանութիւն բացուի, ես խօսելիք ունիմ:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ներեցէք՝ որ կարճ բացատրութիւն մը տամ այդ մասին: Ստոյգ է որ Ազգը չէ ճանչցած Նիկողայոս Սրբազանի կաթողիկոսութիւնը, բայց նա մինչ ցայսօր կաթողիկոս կ'ստորագրէր և չէր հրաժարէր այդ տիտղոսէն, հիմա կը հրաժարի:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ես նախաձեռն պիտի առաջարկեմ, ըստ որում Վարչութիւնն իր տեղեկագրին մէջ առաջարկութիւն մը չուէի և չհարցնէր մեզ թէ իր ըրածն օրինաւոր է կամ ոչ, և ըստ որում ինչպէս Նախագահ Սրբազանը յայտարարեց, թէ և Ազգը Նիկողայոս Սրբազանը կաթողիկոս չէ ճանչցած, բայց նա ալ չէր դադրած մինչև ցայսօր կաթողիկոսի տիտղոսն իր անձին վերագրելէն, ուստի պէտք է գոհ ըլլալ որ հիմա ինքնին յարգելով ազգին վճիռը՝ կուգայ հրաժարիլ այդ տիտղոսէն. ըստ իս ասիկա ազգին վճիռը յարգելու մէկ նշանն է զոր նա կը ցուցնէ իր հրաժարականով: Ուրեմն բա՛ւ է արձանագրելով անցնիլ և գրեցել այս խնդիրը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եռսուֆեան էֆ. կ'ըսէ թէ քանի որ Վարչութիւնը տնօրէնութիւն մ'է ըրեր և զայն առ այժմ ի ծանօթութիւն միայն կը բերէ ժողովոյս, առանց ըստանձնելոյ զխնդիրն արձանագրենք ու անցնինք:

Ասիկա նախաձեռն մ'է զոր քուէի դնել կը պարտաւորիմ:

Նախաձեռնը քուէի դրուելով, 1 քուէի դէմ ստուար մեծամասնութեամբ ընդունեցաւ ժողովէն:

3

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Վարչութեան խառն ժողովոյ կողմէ մատուցեալ յետագայ տեղեկագիրն ալ կարդացուեցաւ:

Վսեմափայլ Ատենապետ փաշա Ազգային Ժողովոյ

Ազգային կեդրոնական Վարչութեան խառն ժողովը Բ. Դանէն նախընթաց Յունիս 12 թուականաւ ծանուցագիր մը ստացաւ, որով Բ. Դուռը կը յայտնէ թէ կայսերական հրամանաւ որոշուած է որ Կարնայ, Վանայ և Տիգրանակերտի գաւառաց մէջ գտնուած ֆրդաց ձեռք տեղացի ժողովրդոց դէմ ի գործ դրուած հարստահարութիւնները բառնալու, չարագործներն ըստ կանոնի պատժելու և կատարեալ ու յարատեւ բարեկարգութիւն հաստատելու համար զօրք զրկուի այն կողմերը, և Պետական խորհրդոյ անդամներէն Վսեմ. Ալի Շէֆիք պէյն ալ լիազօր արտօնութեամբ պաշտօնեայ կարգուած է սոյն որոշումներն ի գործ դնելու համար, և թէ միանգամայն որոշուած է որ յիշեալ պաշտօնէին հետ Հայոց Պատրիարքարանի կողմէն ալ յատուկ մէկը գտնուի. ուստի և կը հրաւիրէ Պատրիարքարանս՝ որ նոյն տեղերու վիճակին հմուտ և բանիրուն անձ մը ընտրուի և իմաց տրուի Բ. Դրան: Սոյն յանձնարարութիւնը կրկնուած է նաև ամսոյս 1 թուականը կրող երկրորդ ծանուցագրով մը:

Խառն ժողովս ներկայ պարագայից մէջ նկատելով որ երբ մէկ կողմէ Բ. Դուռը Պատրիարքարանէն անձ մը կ'ուզէ իր պաշտօնէին հետ մէկտեղ գտնուելու համար, միւս կողմէ լրագրաց մէջ կը կարդացուի թէ յիշեալ Ալի Շէֆիք պէյը և անոր հետ Կիրակոս էֆէնտի Ղազանճեան ճամբայ ելած

մակ ընկալայ, որով հրաւիրելիք զիս 'ի կոն-
 ժողով ինչ ինչ հարցմանց օրացուցական խնդ-
 րոց տալ տեղեկութիւն՝ զնոցեալ իմ 'ի նոյն
 օր, հրաման ընկալայ ատենադատ Սորադանէ
 գրով տալ պատասխանին 'ի տեղեկութիւն.
 զոր աւարիկ խոնարհարար ծանուցանեմ:

Տղադրիչ ոմն ժողովի մը օր կը ներկա-
 յանայ և տաան հազար զրչ. խոտաանալով կը
 խնդրէ մեր արտառութ լծր իրեն վերածել:

Կէ նոյն օրերը կ'օն. ժողովը կը խորհէր
 վախճանեալ աղբատ քահանայից օրացեալ
 զատեկոց և այրիացեալ կանանց նպատակու
 զանձանակ մի հոտաառել, յայնմամ ժողովն
 'ի նկատի առնելով երեսուն և եօթն տարիէ
 'ի վեր օրացուցի հեղինակութեան անխոնջ աշ-
 խատութիւնս, և յիշեալ վախճանաւեալ աշ-
 խատութիւնս ազգ այն զանազան գործոց մէջ,
 և զիւրով ուխտանաւեալ ծերութեան և
 տկարութեան վրայ, նոյն տաղարիչին ի ըն-
 դիրը մերժեց, և մեզ առաջարկեց իրեն նը-
 ուէր տարք մի շնորհել յիշեալ զանձանակին.
 յիրաւի այն ժամանակ խոտացայ տարեկան
 վեց հազար զրչ. նոյն զանձանակին շնորհել,
 ինչպէս արձանագրեալ կայ կրօն. ժողովոյ
 տուժարին մէջ 'ի նիստ լ. Ե. յերես 95. ի թիւ 81:

Կէ իրեն առհաստաչեայ այն ժամանակ
 5500 զրչ. յանձնեցինք Պատրիարքարանի մէջ
 համարակալ Էֆէնտիին, և այն առաջին տա-
 րեկանին մնացեալը երբ է միկելի սանարդին
 Յովնանէ և Էֆէնտիին բառ հոտամի հաւ. Պէ. յ
 խորին կրթալանի յանձնելու եղանք, նա ալ
 առաւ և ոտի չըլլալուն համար և թղթաղը-
 բամ ըլլալուն համար շնորհունեց և յետո
 զարձայց:

Այս միջոցին պատերազմական ձայները
 բարձրացան, քաղաքիս անդ որբութիւնը բար-
 ձաւ, ամենայն ուսուլեսց թանկութեան օր
 քան զօր սաստկացաւ, տուր և առութիւն
 զաղարեցաւ, և որ ինչ կայր 'ի ձեռին մեր
 թղթաղրամ վատնեցան և փճացան, և 1878
 ամեն առ ի չզոյէ պղինձ կամ մանր թղթա-
 զրամոց տաան հազար զրչ. ի շափ օրացոյց մը-
 նաց անվաճաւ 'ի կրտակս գրաւաճաւաց, որ
 կարէր սառեղել: Տղադրութիւն տարեկան
 օրացուցի կարօտի յիսուն թօի թղթոյ, որ

երկամեայ ժամանակ յառաջ յիսուն երկու
 դահեկանի վաճառիւր. այժմ մինչև հարիւր
 քառասուն դահեկանի բարձրացաւ, նոյնպէս
 և ծախք մեղանի, տաղարութեան, կազմի
 և, զոր մեր խոտուման ժամանակ չկարացաք
 գուշակել:

Կէ ահա այս է զլիաւոր պատճառ ան-
 վար մնալոյ խոտացեալ զրամոց, որոյ
 ստուգութիւնն ըստ ինքեան ծանուցեալ, չէ
 կարօտ տարացուցական վատեւրու, և ըստ
 հրամանի Սորադան ատենադատի կրօն. պատ-
 կառելի ժողովոյ ծանուցանելով բարձրա-
 շնորհ Ս. Հայրութեան ձերոյ:

Մնամ ամենայն խոնարհութեամբ
 մշտանուէր ծառայ

Երէմիայ Կոնստանտին

24 Դեկտեմբեր 1877

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ասկէ առաջ Քա-
 ռաքաչեան Էֆէնտի հարցում մ'ըրեր էր վար-
 չութեան. այս տեղեկագիրն անոր պատաս-
 խանն է. կը հաղցունեմ նախ Քարաքաչեան
 Էֆէնտիին թէ զո՞ն է:

ԲԱՐԱԲԱՇ Ն. ԷՖ. ՆՏԻ.— Դիտողութիւն
 մ'ունիմ. վարչութեան այս տեղեկագրին
 նայելով օրացոյցի մենաշնորհն այսօր ընձուած
 է. սակայն եթէ վաղը տաղարիչներէն մէկը
 կամ միւսն ելնէ օրացոյց հրատարակէ և քա-
 հանայն կառավարութեան միջոցաւ արգիլել
 ուղի, վարչութիւնը պաշտպանութիւն կը
 խոտաանայ արդեօք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Այդ ուրիշ խնդիր
 է. եթէ արդի պատասխանէն զո՞ն չ'էք և
 հարցում և փճարանութիւնը ընելու պէտք
 կ'տեսնէն, խնդիրը նախաքննութեան պէտք
 է յղենք:

ԲԱՐԱԲԱՇ Ն. ԷՖ.— Այո՛, կառաջար-
 կեմ որ յղուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Խնդիրը մինչեւ որ
 նախաքննութեանէ անցնի, բաւական ժամա-

նակ պիտի անցնի. բայց ըստ որում օրացոյ-
 ցի վրայ է, որ կանուխ կը տողուի և շուտ կը
 ցրուի Ազգիս մէջ. եթէ տաղարիչներն վար-
 չութեան տնօրէնութիւնն բառ առ բառ
 գործադրելու ելնեն, վտանգ կրնայ ծա-
 գիլ. զի վարչութիւնն հսկողութիւնէ ազատ
 ձգած կ'երեւի օրացոյցի կարգ աղբութիւնը,
 և երբ սա՝ մեր եկեղեցւոյ տնօրէնն ևն. մէջ
 շփոթութիւնք բերելով տաղուի, անգամ մը
 ցրուելէ ետեւ զժուար կ'ըլլայ սխալներն
 ժամանակին ուղղելը: Այս դիտողութիւնն
 հրատարակաւ այժմէն ուղղելով ի Տղադրիչս
 կ'յղենք խնդիրն ի նախաքննութիւն:

ԴԱԶԱՐԱՆԱՆ Ք. ԷՖ.— Ասոնք վարչու-
 թեան մանրամասն գործերն են, որոց վրայ
 մեր զրադելու չենք. մեք մեր օրակարգին
 խնդիրներովս պէտք է զրադիւք. ուստի կա-
 ռաքաչեան որ վարչութեան վերաբերեալ
 խնդիրներն իրեն վերադարձուին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Խեղճ վարչութիւն
 հարցում կ'ուղղենք իրեն, և երբ պատաս-
 խան կ'երեւի՝ ինչո՞ւ բերիր կրօնք և խնդի-
 րըն իրեն վերադարձուել կ'առաջարկենք.
 ցաւալի՛ բան:

ՄԷՐԵԼԻՄ-ԴԻԼԻ Յ. ԷՖ.— Շփոթ մը կը
 տեսնեմ, զոր չեմ հասկընար. Քարաքաչ է.
 Ֆէնտիի հարցումը 24000 զրի վտանգ մը չօ-
 շափել կուտար: Վարչութիւնը պատասխան
 բերաւ, որուն մէջ մենաշնորհի բարձումը
 կայ. հիմա ուրիշ պարագաներու մոնելն ա-
 լելորդ է. եթէ Քարաքաչ Էֆէնտի վարչու-
 թեան բերած պատասխանէն զո՞ն է՝ թող
 ըսէ լինայ:

ԲՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ.— Խօսք կուղեմ. Ա.
 տեսնալեա վաշային վարչութեան նկատմամբ
 ըրած մէկ դիտողութեան պատասխանելու
 համար որ սխալ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Այս խնդրոյ վե-
 րայ այլ ևւս խօսելու հարկ չ'կայ, զի նա.
 խաքննութեան պիտի յղուի. վերջը փճարա-
 նութեան ժամանակ ուղաձնուդ շափ կըր-

նաք խօսիլ:
 ԲՕԼՕԼԵԱՆ ԷՖ.— Ո՛չ, ո՛չ, պիտի խօ-
 սիմ, վարչութեան տնօրէնութեան գէժութե-
 անցաք, պիտի պատասխանեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Կ'աղաչեմ, իմ
 դիտողութիւնս օրացոյց հրատարակողներու
 ուղեալ է. վարչութեան սող տանք ընող չը-
 կայ. եթէ դիտողութեան պատասխանելու
 համար կը պիտի չէք, ես կ'առնում դիտողու-
 թիւնս, զի մանր մանր պարագայից վրայ
 երկար փճարանութեամբ ժամանակնիս կ'ըս-
 տաւենք:

ԱԼԻԲԱՆՆԵԱՆ Մ. ԷՖ.— Խնդիրը պար-
 չելու համար խօսք կուղենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Խնդիրս նախաքնն-
 նութեամբ պիտի պարզուի և փճարանու-
 թեամբ որոշուի. այլ ևւս փճարանելու տե-
 զի չ'կայ. կ'ղենք զայն իրաւասութեան դի-
 ւանին:

Քանք որ հիմա մեծամասնութիւն զտած
 է ժողովն և պէտք է սկիւնք օրակարգի խնն-
 դիրներուն: Քոխոտոտուր Էֆէնտի խօսք
 մ'ըրաւ, իրաւացի էր. քանի որ օրակարգ
 մ'ունինք, զայն մղել և ուրիշ գործերով
 զտաղիլ անտ' զի է. ես տակն առաջ առա-
 ջարկութիւն բրած եմ, մէկ ժամէն աւելի
 չ'զո՞տի առնեալան գործողութեանց, սոյն
 առաջարկս նախաքննութեան յղուեցաւ և
 դեռ տեղեկագիրն եկած չէ. բայց հոգ մի՛
 ընէք. ես այս սովորութիւնը միշտ հաստատ
 պիտի պահեմ. այսօր ալ տակաւին առեա-
 լի բացումէն ի վեր մէկ ժամ ամբողջ անցած
 չ'է:

5

ԱՌՆԱԴՐԱՐՈՒԹԻՒՆ 12 ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

12 Երեսօրիտանաց կողմէ մատուցեալ յե-
 տաղայ հարցման գիրը կարդացուեցաւ:

Տեսնալով որ Պէրլինի Աւագածողուն իր գործողութիւններն աւարտած է, և ի հարկէ Հայոց խնդրոյն նկատմամբ ալ որոշում մը տուած, կը խնդրենք Ս. Պատրիարք Հօրմէն որ հաճի մեզ այս մասին պէտք եղած տեղեկութիւնը հաղորդել այսօր:

7 Յուլիս 1878

Ա. Գ. Երեսփոխանք

- Ա. Վ. Ռուբինեան
- Հմայեակ Վ. Ղիմաքսեան
- Եղիշիկ Վ. Աղաջուհի
- Գրիգոր Քնյ. Աճմեան
- Սահակ Քնյ. Տէր Սարգսեան
- Բարթող Քնյ. Բարձրապետեան
- Մ. Յ. Մէլիքեան
- Տրդատ Փափազեան
- Յարութիւն Թիւլեան
- Յ. Յիւնիսեան
- Յովհաննէս Մարգարեան
- Գէորգ Վարդանեան

Ղիւանին առաջարկութեամբ որոշուեցաւ յղել առ Ս. Պատրիարքն ի պատասխանատուութիւն առաջիկայ նստին:

ՕՐԱԿԱՐԳ

Ա.

Ուղերձ ի պատասխանի Նախագահական ճառին

ԱՏԵՆԱՊԵՏ ԲԱՇԱ. — Սրբազան Պատրիարք Հօր բացման ճառին ի պատասխան ուղերձի ծրագիրն նախընթաց նստին կարգացուեցաւ և վիճարանութիւն եղաւ վրան. քուէի ալ դրուեցաւ և ներկայից մեծագոյն մասն զայն ո՛րպէս և է ընդունելու կողմէն էր. սակայն ժողովը իսկական մեծամասնութիւն չ'ունենալուն և զէթ 24 որոշող ձայնից միաբանութիւն չ'զոյանալուն քուէարկութիւնն իրր չեղեալ նկատեցինք ըստ կա-

նոնի. եւ անցուցինք օրակարգն. այսօր կրկին կ'ներկայանայ ի քուէարկութիւն. բայց եթէ ժողովն առջի վիճարանութիւնը բաւական չ'ամարէ, նորէն վիճարանութիւն կըրնայ ըլլալ. Ուստի նախ և առաջ այս կէտը որոշելու համար պատրաստ եմ խօսք տալ:

ՇԱՀԱՊԱԶ Կ. ԷՖ. — Ես թէ և նախընթաց նստին բացակայ էի, բայց ատենագրութեանը մէջ կարդացի եղած վիճարանութիւնը, և կը կարծեմ թէ բաւական է:

Ա.Լ.ԲԱՍՏԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ նմանապէս բաւական կը դանձմ:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Ես կը կարծեմ թէ թերի նստի մէջ եղած վիճարանութիւնն անբաւական է և անվաւեր. և քանի որ նախորդ նստին ներկայ չեղողներէն շատերն այսօր ներկայ են, պէտք է անոնք ալ խօսին և կարծիքն յայտնեն, խնդիրն աւելի լուսարանելու համար. և քանի որ որոշող ձայնից առաւելութիւն չ'զոյացաւ, ո՛չ ինչոյն քուէարկութիւնն անվաւեր է, այլ և վիճարանութիւնն. պէտք է այսօր ամենաբան նորէն սկսինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԲԱՇԱ (Ընդհատ) — Ներեցէք՝ Պէկեան էֆէնտի, ձեզ կ'ընդմիջեմ կանոնական մէկ սխալելիք ուղղելու համար: Մեր ներքին կանոնադրութիւնը չեղած՝ օրինական և իսկ սկսած մեծամասնութիւն, որոշող ձայնից միաբանութիւն և այլ այսպիսի բաներ չ'կրնաք փնտռել. բայց հիմա կը փնտռենք, քանի որ սա կանոնադրութիւնը մեր վրայ իրր օրէնք կ'ադրէ:

Արդ՝ կանոնադրութեան 51-րդ յօդուածը կըսէ որ եթէ ստաճին նիստի մը մէջ չը գոյանայ իսկական մեծամասնութիւն, բայց որոշող ձայնները միաբանին, որոշումը վաւերական է. իսկ եթէ չ'միաբանին, նիստն անբաւական կ'համարուի, և էֆէնտէն ինչեւ չ'էֆէնտէն յօդուածը նորէն էֆէնտէն, որ սոսկ որոշող մասին ներկայութիւնը միայն կրաւէ: Ուրեմն եթէ այսօր ներկայից թիւը 24 ալ ըլլար, փորձեալ որոշումը պիտի որոշէինք:

ո՛ր մնաց որ իսկական մեծամասնութիւն ունինք. քուէարկութիւնն իրրեւ չեղեալ կը նկատուի, իսկ վիճարանութիւնը ո՛չ. նախընթաց նստի քուէարկութեան անյաջողութիւնը ինչոյն քուէարկութիւնը կ'ադրէ, բայց էֆէնտէն չ'ադրէ: Այս դիտողութենէ ետք՝ խօսքերնիդ կրնաք շարունակել:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Բայց 52-րդ յօդուածն ալ կարդա՛, որ կըսէ թէ սոսկ որոշող մասին ներկայութեամբը նստեալ ատենին մէջ ո՛չ օրակարգէն դուրս խնդիր ներքին է որոշել և ո՛չ իսկ վիճարանութիւնը փակել անկէ դուրս խնդրի մը վրայ, եթէ յուզուի: Այն օրը պէտք չ'էր ներքին, զի օրակարգէն դուրս էր. ըսել է թէ եթէ դիտուածով կամ սրխալմամբ խնդիր մը յուզուի օրակարգէն դուրս, անոր վիճարանութիւնը փակել ժողովն ձեռքը չ'է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կրկին կը սխալիր. ներեցէք որ դարձեալ սխալելիք չ'ուրեմն: Ժողովոյս երկրորդ նստին մէջ զիւանը բացարձակ կերպով խօսք տուաւ Համագումարի վաւերական կողմէն ուղերձին խմբագրութիւնը բերել երրորդին, և բերաւ. վիճարանութեան դրուելու պահուն Պէկեան էֆէնտի հարցուց և պատասխան առաւ թէ ատենադիր է: Ֆէնտին մոռցեր էր զայն իրր օրակարգն անցած խնդիր կոչնագրոց մէջ յիշատակել: Ուստի նոյն օրը վիճարանութիւնն սկսաւ և Պէկեան էֆէնտի ալ մեծաւ մասամբ մասնակցեցաւ. զարմանալի է եթէ այսօր իրր չեղեալ համարի ինչ որ այն օր զրուցուեցաւ: Ասկէ զատ Պէկեան էֆէնտի մէջ բերած կանոնական յօդուածը չ'համապատասխանէր իր առարկութեան. զի անցեալ նստին՝ սոսկ որոշող մասին ներկայութեամբ կազմեալ նիստ չ'ունէինք, այլ առաւել քան զայս անդամոց ներկայութիւն կար և ատենագրութիւնը ցոյց կուտայ թէ ո՛րպիսի եւ առաջով վիճարանութիւն կատարուեցաւ ուն խնդրոյ վրայ: Սակայն և այնպէս եթէ ժողովն ուզէ՝ կրնաք վիճարանութիւնը նորէն սկսիլ:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Այո՛, հարցուցի նոյն օրը: Չեր վսեմութիւնը պատասխանեց թէ որոշում եղած է ուղերձը բերել. բայց ես ըսի թէ քանի որ հրաւիրագրին մէջ չկայ, յանակնկալ է, չենք կրնար վիճարանիլ. բայց դուք սնդեցիք, ե՛ս ալ յակամայից ընդունեցի վիճարանութիւնը:

Ատենապետ փաշան, (ընդմիջելով), սրբապետեղը ժամանակ կը վատնենք. թո՛ղ ժողովը իր բացարձակ կամքն յայտնէ, ըսաւ, և վիճարանութեան շարունակութիւնը քուէի դրաւ. ժողովը 11 քուէի դէմ 18 քուէով վիճարանութիւնը շարունակել որոշեց:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — (Անմիջապէս ձեռք առաւ խօսքին թելը և շարունակեց) Սրբազան Պատրիարքն իր բացման ճառին մէջ առաջարկութիւն մը բերած էր. այն է հաստատել իր ընտրած խորհրդականը. ժողովն ի սկզբան չուղեց յուզել այս խնդիրը և ուղերձին ձգեց. յետոյ երբ Նորին Սրբազնութիւնը սնդեց, ժողովն իրրեւ առանձին խնդիր վիճարանութեան ենթարկեց, որոյ արդիւնքն եղաւ մերժում:

Արդ՝ մերժեալ առաջարկութիւն մը կանոնադրութեան 54-րդ յօդուածին համաձայն՝ չկրնար նորէն ներկայանալ. սակայն զիւանն ուղերձին միջոցաւ նորէն կրերէ և կուզէ վաւերացնել տալ բարեփոխութեան ձեւի մը տակ, ըսելով թէ պատասխանատուութիւնը դարձեալ Պատրիարքին վրայ կ'մնայ. զիւանն այդ առարկութեամբ հակասութեան մէջ չ'իյնայ. ժողովն իր չընտրածը չկրնար ինք վաւերացնել, և երբ Պատրիարքը խորհրդական մը ընտրեր է և ժողովը զայն վաւերացնէ, Պատրիարքը պատասխանատուութենէ կ'ենէ. զիւանն այսպիսի բարեփոխութիւն մ'ընելու ալ իրաւունք չունի ըստ կանոնադրութեան: Ատենապետաց զիւանին այսպիսի իրաւունք մը չունենալը հաստատուէ ետեւ կ'անցնիմ բուն խնդրոյն:

Ժողովն այն օրն՝ երբ Սրբազան Պատրիարքի առաջարկած վաւերացումը մերժեց, առանց որոշման չէր, վասն զի սահմանա-

դրութիւնը չէ նախատեսեր, և վասն զի հարկ ալ չկայ, սակայն ես չեմ ըսեր թէ քանի որ սահմանադրութեան մէջ չկայ, ժողովը չկրնար ընել. այո՛, կրնայ ընել, բայց պարտական է նախ վերաքննութեան ճամբով օրինաց կարգ անցունելու: Ատենապետ փաշան անցեալ նշատին ըսաւ թէ ես իբրեւ սահմանադրութեան հեղինակներէն մին կը յայտարարեմ թէ սահմանադրութեան տառին թէ և հակառակ է, բայց ոգւոյն չհակառակիր, ինչո՞ւ կը խորշի. կը ցաւիմ որ այս խօսքն ատենագրութեան մէջ անցած չէ: Տառին և ոգւոյն խնդիրը բաւական յուզուեցաւ Խորիմեան Սրբազանի Պատրիարքութեան օրով: Խորիմեան Սրբազան կ'ուզէր սահմանադրութեան ոգւոյն հետեւիլ առաւել քան տառին. ժողովն այն ատեն ըսաւ իրեն թէ երբ ըստ տառին անգործադրելի կամ դժուարին կէտ մը ձեր առջև ելնէ, բերէք որ վերաքննենք. բայց մինչև որ վերաքննուի, սահմանադրութիւնը տիրող օրէնք է, չէք կրնար անկէ դուրս ելնել:

Կը յիշեմ որ նոյն իսկ Ատենապետ փաշան օր մը Ներսէս Սրբազանին ալ ըսաւ թէ սահմանադրական Պատրիարք էք. բայց հիմա մոռցեր է: Քանի որ առանց վաւերացնելու ալ կրնանք այս խնդրոյն մէջէն ելնել, ինչո՞ւ սահմանադրութենէն չեղինք. եթէ իբր սահմանադրական խնդիր բերէին, անշուշտ վիճարանութեան բովին պիտի անցնէր. երբ Պատրիարք մ' ունինք և խորհրդական մ' ալ վաւերացնենք, երկու անձ կ'ըլլան և շփոթներ կը ծագին պատասխանատուութեան մասին. այս կէտերը որոշուելու են:

Ըստ իմ կարծեաց՝ քանի որ սահմանադրութեան մէջ չկայ, պէտք չէ վաւերացնենք, ուղերձին մէջ ալ այն կէտը պէտք է բարեփոխուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Պէկեան էֆէնտի խօսքերուն մէջ մէկ քանի սխալ կէտեր կան, ուղղելու կը պարտաւորիմ. նախ կ'ըսէ նա թէ « Սրբազան Պատրիարքին առաջարկութիւնը Ա. նստին մերժուած է եղեր » սըր խալ է. Ա. նստին ատենագրութիւնը յայտնի

կը ցուցնէ որ սոյն խնդրոյ վրայ բաւական խօսակցութենէ ետքը՝ « դոցենք այս միջադէպը » ըսուեր անցուեր է. այս է որոշումը. միթէ խնդիր մը նախաքննութենէ չանցած, օրակարգ չմտած, վիճարանութեան չենթարկուած, քուէարկութեան փորձին չգարնուած կրնայ որոշուիլ: Պէկեան էֆէնտի դարձեալ կ'ըսէ « մերժեալ խնդիր մը կրկին չկրնար ժողովին բերուիլ, դիւանը կը բերէ » սխալ է. նախ խնդիրը մերժուած չէր. և դիւանը ուղերձին պատասխանելու ժամանակ իր կարծիքն յառաջ բերելու պարտական էր, զայն ըրաւ: Երրորդ Պէկեան էֆէնտի « անցեալ նստին իմ սահմանադրութեան խմբագրութեան վրայ խօսածներս պակաս կը գտնէ ատենագրութեան մէջ, և զիս « քաջ » և « քաջ » խտրութեան նախանձխնդիր կ'ուզէ ցոյց տալ » սխալ է. ես ինչ որ ըսի այն գրուած է ատենագրութեան մէջ, և չըսի՝ ինչ որ Պէկեան էֆէնտի կ'ուզէ որ ըսած ըլլամ:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ես վիճարանութիւնն երկարողներէն չեմ և չեմ ուզեր ըլլալ միայն թէ Պէկեան էֆէնտի այնպիսի կարծիքներ յայտնեց, որ ճամարտութեան դէմ չէին. եթէ բարեփոխութիւն մը՝ զոր պիտի առաջարկեմ, ընդունուի, կարծիքները դո՛ւ կրնան ըլլալ:

Կառաջարկեմ որ ուղերձին այն կէտը բարեփոխուի սա բառերով. « Ձեր հրաժարականը առ ձեզ վերադարձնելով ժողովը հաճ և հաւան է ձեր ընտրած խորհրդականին պաշտօնին »:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Արդէն ես բարեփոխութեան առաջարկութիւն մ' ունիմ. որովհետեւ սկիզբէն ես էի դէմ խօսողը:

ՇԱՀՊԱՋ Կ. ԷՖ. — Կուգէի հասկընալ թէ ատենապետաց դիւանն ինչ նշանակութեամբ գործածեր է հաստատել բառը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բացատրեմ. Աշրբազան Պատրիարքն իրեն խորհրդական մը

ընտրեր է առանց հարցնելու ժողովին. զի հարցունելու ալ պատեհ չէ ունեցեր. բացման ճառին մէջ սրբազանը կ'առաջարկէ որ անոր պաշտօնն հաստատուի ժողովով. դիւանը անոր պատասխանին մէջ նոյն իսկ սըրբազանին գործածած հարցոյնը բառն ընդունեց մի՞նչ նոյն նշանակութեամբ որ սրբազանը ընդունած էր. այսինքն ճանչնալ այնպիսի պաշտօնակալի մը հաստատութիւնը, անոր ընտրութիւնն ընդունիլ և ընդունիլ նաեւ պաշտօնավարութեանը համար որոշուած սահմանները: Զգիտեմ թէ այս նշանակութենէն խորհելու ինչ պատճառ կայ:

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Ատենապետ փաշային հաստատել բառին վրայ տուած բացատրութիւնները լսելէս ետեւ ինձ համար շատ պարզուած է խնդիրը. կ'տեսնեմ որ Պէկեան էֆէնտի դիտողութեանց ոգին հետի չէ ատենապետ փաշային դիտողութեանց ոգիէն. վերջապէս բառի շփոթութիւն մ' է, որ ոգւոյն ներգործեր է, կարծուելով թէ Պատրիարքական խորհրդականն այս ժողովէն ընտրուածի պէս է, և ասիկա օրինակ մը կ'ըլլայ ապագային համար: Ուստի այնպիսի բառ մը գործածել պէտք է որ շփոթութիւն չտայ. արդէն որոշ կտեսնուի կոր որ խընդիրը խորհրդականի անձին վրայ չէ, իրաւանց և պարտեաց սկզբունքի պահպանութեան վրայ է, ընտրեալն ամենուս հաճելին է. ինչպէս որ նախորդ նստերու ատենագրութեանց մէջ գրուածներն ալ կ'ըլլային. Սրբազան Պատրիարքը կարծելով թէ հակասահմանադրական գործ մ' ըրած է իր խորհրդականն ընտրելով՝ ժողովէն հաստատութիւն կ'ընդրէ. բայց ժողովը կ'ըսէ թէ այդ ընտրութեան իրաւունքը ձերն է և անոր դէմ ոչ մէկն ըսելիք մ' ունի. միայն մէկ կէտ մը կ'մնայ գիտնալ Ս. Պատրիարքին, այն է թէ արդեօք իր ընտրածն այս ժողովին հաճելի է: Գալով սրբազանին ճամբորդութեան խնդրոյն, կարծեմ ճամբորդութեան պարագային մէջ տեղապահ մը պէտք է և այս մասին Սահմանադրութեան մէջ տրամադրու-

թիւն մը կայ արդէն. ուստի ասոր վրայ ալ չփոթելու տեղի չկայ. խորհրդական մ' ընտրուած է արդէն, որ կրնայ այն ատեն տեղապահի փոխուիլ կամ ուրիշ մ' ընտրուիլ եթէ պէտք ըլլայ:

Հիմա որովհետեւ հաստատել բառը չըփոթութիւն կուտայ կոր, կրնայ բարեփոխուիլ և ըսուիլ « գոհութեամբ կամ հաճութեամբ կնկատեմք կամ կ'ըսենք ». այսպիսի բարեփոխութեամբ մը կ'ըլլեր ինչպէս խնդիրը:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ինչ որ պիտի ըսէի՝ Եռսուֆեան էֆէնտին ըսաւ և պէտք եղածէն աւելին խօսեցաւ. ես ալ անոր ըսածները կրկնելով կառաջարկեմ որ հաստատել բառին տեղ ուրիշ յարմար բառ մը դրուի. ինչպէս գոհութեամբ նկատել, լսել և լն:

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Եղած խօսքերէն այնպէս կ'հասկցուի որ իբր թէ նոր խնդիր մ' է կուգայ այսօր հոս. ընդհակառակը նոր չէ. առաջին նստին մէջ արդէն յուշուած է և Պատրիարքը գոհ եղած ժողովին որոշումէն. ինչո՞ւ համար իբր նոր խնդիր մը նորէն կ'յուշուի այսօր: Առաջին նստին մէջ Ս. Պատրիարքը ժողովին հաճութիւնն առաւ իր ընտրած խորհրդականին համար և գոհ եղաւ. միայն երբ ճամբորդութիւն ընել իրեն պէտք ըլլար, այն ատենն ալ Խառն ժողովին հետ մէկ տեղ պէտք եղածն ի գործ պիտի դրուի՝ ըսուեցաւ և լմնցաւ, մենք ալ յայտարարեցինք որ Խառն ժողովն հաստատած և վաւերացուցած է խորհրդականի պաշտօնը, այս ժողովին ընելիքը անօգուտ կրկնութիւն մ' է, Հիմա ասոր վրայ երկար բարակ վիճելու հարկ չկայ. ինչ որոշում որ տրուեցաւ, անկէ պէտք չէ շեղուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դարձեալ՝ Քօլօլեան էֆէնտի խօսքին վրայ կ'պարտաւորիմ ի դիմաց ատենապետաց դիւանին պատասխանել:

Նախ և առաջ Քօլօլեան էֆէնտի կ'սխալի՝ եթէ կը կարծէ թէ առաջին նստին մէջ

Ժարականներն ընդունել և նոր ընտրութեանց ձեռնարկել. ասոր վրայ տարածայնութիւն չ'կայ. իսկ միւսն է ներկայ և նախորդ Քաղ. ժողովոց անդամները վերընտրելի նկատել։ Այս վերջին կէտին վրայ կարծիքներն իրարմէ կտարբերին, մէկը կըսէ թէ առաջինները վերընտրելի չեն և վերջիններն են, միւսը կըսէ թէ երկուքն ալ վերընտրելի չեն։ Երկու կողմն ալ իրենց խօսքն օրինաց վրայ յենուէ կ'ուզեն, բայց առանց օրինաւոր պատճառ մէջ բերելու միայն վճիռ կ'արձակեն. այս եղանակաւ խնդիրը չ'լուծուիր. կամ փաստաբանելու է և օրէնքով հաստատելու թէ ինչ պատճառաւ հրաժարեալք ամբողջ կամ մասամբ միայն վերընտրելի պէտք չ'են ըլլալ կամ ըլլալ. և կամ եթէ փաստ չ'կայ քուէի դիմելու է։

ՉԱՅՆԵՐ.— Ո՛չ, տակաւին չարունակենք վիճարանութիւնը։

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ.— Օրինաց գէ՛մ դեղծանիլը օրէնքն ոտնակոխ ընել կնշանակէ. օրինօք դադարեալ Քաղ. ժողով մը նորէն ընտրելը մեր ձեռքը չէ. պատճառն ըսեմ։ Թէ և Բ. դուռը նայած չունի այս կէտը, երբէք դիտողութիւն մ'ըրած չունի. բայց օր մ'ալ կրնայ ընել. գիտնալու էք որ թէ ներկային և թէ նախորդին ընտրութեան համար ալ Լաբլէ գրուած է, և անունները ծանուցուելով հաւանութիւն առնուած է. հիմա քանի որ երկամեայ պայմանաժամը լրացած ըլլալով կհրաժարին, պէտք է օրինաց համեմատ վարուինք. օրէնքը չնեղէր որ նորէն ինծի Քաղ. ժող. պաշտօն տրուի։

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Այս մասին որոշում մը կ'յիշեմ և կարծեմ թէ իրաւասութեան դիւանն ալ անոր վրայ հիմնած է իր առաջարկութիւնը։ Նախորդ Քաղ. ժողովոյ հրաժարման ընդունելութեան պահուն մեր ընկերներէն Մամիկոնեան էֆէնտին ըսած էր որ եթէ հրաժարելոց վերընտրելութիւն

ներն որոշենք, Ս. Պատրիարքը գոհ կ'ըլլայ, և այն ատեն վերընտրելութիւնն որոշուելով հրաժարելոց անուններն ալ անցան ընտրելեաց ցանկին մէջ։

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ.— Սահմանադրութեան 387 յօդուածը կըսէ թէ Քաղ. ժողովը երկու տարին անգամ մը ապրիլի վերջըն ամբողջ կ'լուծուի, և մայիսի սկիզբը կը նորոգուի։ Այս ժողովոյ անդամներն երկու տարի անցնելէն ետքը նորէն կրնան ընտրուիլ. և թէպէտ առջի երկու տարին Քաղ. ժողովոյ համար վերընտրելի չեն, բայց ուրիշ որ և է ազգային պաշտօնի մէջ կրնան գործածուիլ։

Ահա մեր Սահմանադրութեան տրամադրութիւնն այսչափ է այս կէտին համար. մի և նոյնն է նաև կրօն. ժողովոյ մասին։ Քաղ. ժողովը երկու տարի պաշտօն պիտի վարէ և անկէ ետք մինչեւ երկու տարի վերընտրելի չպիտի ըլլայ կըսէ Սահմանադրութիւնը. բայց չըսէր թէ՛ եթէ տարիէ մը կամ 6 ամիսէն ետեւ որ և է պատճառաւ հրաժարելու կամ լուծուելու ըլլայ. հետեւանքն ինչ պիտի ըլլայ, կամ թէ պիտի կըրնայ վերընտրելի ըլլալ։

Քաղաքական էֆէնտին ժողովոյս անցեալ տարուան մէկ որոշումը յիշեցուց. ստոյգ է որ նախորդ Քաղ. ժողովոյ հրաժարման առթիւ ժողովս զայն վերընտրելի հռչակեց այն ատեն. փասն զի իր պայմանաժամը չլրացած կհրաժարէր, և բնական էր զայն վերընտրելի ընել. Հիմա մի և նոյն ժողովին պայմանաժամն է որ կ'ընենայ. ենթացողքն որ չարունակած ըլլար նա, ինչ պիտի ընէինք. չպիտի կրնայինք վերընտրելի ընել, ինչու որ Սահմանադրութեան 387 յօդուածին դէմ պիտի գայ։

Կմնայ անոր յաջորդող ժողովին անդամոց վերընտրելի ըլլալու կամ չըլլալու կէտը. այնպիսի կնճիռ մ'է որ դիւրութեամբ չ'ըրնար լուծուիլ. թէ՛ ի նպատակ և թէ՛ հակառակը կրնայ փաստաբանուիլ. մէկ կողմէ սահմանադրութեան մէջ այս մասին տրա-

մադրութիւն մը չ'կայ, միւս կողմէ ասոնք առաջիններուն չարունակութիւնն են, բայց անձնականապէս չեն ներկայացներ։ Աստի այս տարուան համար կրնան վերընտրելի ըլլալ։

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ.— Ներկայ Քաղ. ժողովն իր նախորդին պաշտօնավարութեան պակասը լրացնելու համար ընտրուած էր. իրաւասութեան դիւանն ալ իր տեղեկագրին մէջ ներկայն նախորդին չարունակութիւնն էր կըսէ. եթէ չարունակութիւնն էր, երկուքն իբր մէկ մարմին՝ պաշտօնին լրացուցած նկատելով պէտք չէ վերընտրելի լինին. իսկ եթէ չարունակութիւնը չէ, վերջինները տարի մը ևս պաշտօն վարելու իրաւունք ունին։

ԳԱՐԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Երբ Ազգային ժողովն որոշում մը կուտայ, օրինաց կարգ կ'անցնի այն. ես կը յիշեմ որ 1870ին Խորհեան Սորազանի օրով կազմուած Քաղ. ժողովն իր չըջանը լրացնելէ ետեւ տարի մ'ալ պաշտօն վարեց այս ժողովին որոշմամբ. նոյնպէս Մաքսուտեան Ամօն պէյի ատենապետութեամբ Քաղ. ժողովն երեք տարի պաշտօն վարեց, այս բացառութեանց նախելով՝ ըսել կ'ըլլայ որ ժողովը Սահմանադրութեան այդ կէտը բարեփոխած է արդէն։

Ատենաբանից շարքն սպառելով, Ատենապետ փաշան նախ՝ վիճարանութեան փակուիլ քուէի դրաւ, որ ընդունէր ժողովն միաձայնութեամբ։

Յետոյ՝ իրաւասութեան դիւանի տեղեկագրին առաջարկութիւնները մի առ մի քուէի դրաւ, որք են՝

Ա. Վարչութեան կրկին ժողովոց ըստ օրինի մատուցած հրաժարականն ընդունիլ և անմիջապէս նոր ընտրութեան ձեռնարկել։

Այս առաջարկութիւնը միաձայնութեամբ ընդունէր ժողովն։

Բ. Արդի և նախորդ Քաղ. ժողովոց ան-

դամները վերընտրելի հռչակել։

Այս առաջարկութիւնը չ'ընդունուելով, միայն արդի Քաղ. ժողովոյ անդամոց վերընտրելութեան մասը վերստին քուէի դրուելէ ետեւ, ստուար մեծամասնութեամբ ընդունէր։

Իսկ տեղեկագրին Գ. և վերջին առաջարկութիւնը քուէի դնել հարկ չդատուելով որոշուեցաւ որ յաջորդ նստին կրօն. և Քաղ. ժողովոց ընտրութիւնը կատարուելու համար՝ եկեղեցական Համագումար ժողովին և Ատենապետաց դիւանին կողմէ պէտք եղած ընտրելեաց կրկին ցանկերը ներկայացուին։

Գ.

Տեղեկագիր Մայր դիւանի, բացակայ և հրաժարելի եկեղեցական և աշխարհական երեսփոխանաց վրայ։

Մայր դիւանի կողմէն ներկայացեալ յետագայ տեղեկագիրը կարդացուեցաւ։

Տեսութեամբ անցեալ նստին երեսփոխանաց ոմանց երկար ժամանակ բացակայ գտնուելով անունին դարձեալ երեսփոխանաց ցուցակին մէջ արձանագրեալ մնալուն վրայ իրնագիր ծագելով, ձեր ատենապետի առաջարկութեամբ յանձնարարութիւն եղաւ դիւանին՝ սոյն խնդիրը նախաքննել և երեսփոխանութեան ամբողջութիւնն ապահովելու և մեր նստերուն գէթ իսկական մեծամասնութիւն անգամոց ունենալուն եղանակը գտնել և միջոցն առաջարկել։

Դիւանն այս աշխատութիւնն ըրաւ, և ահաասիկ արդիւնքը։

Ա.

Երեսփոխանաց ամբողջութիւնն այս միջոցին բաւական փաստուած է, զի 24 երեսփոխանք պակասած են մեր շարքէն։ Ասոնցմէ

Ա. Երեք երեսփոխանը հանգուցեալ են, որ են կարապետ Պէռեանց, Յովհաննէս Աղայէկեան և Օգոսէն Խոճասարեան:

Բ. Տառնեւթիւն երեսփոխանը դեռ ընտրուած չեն. ասոնք են՝ մէկ երեսփոխան եկեղեցական դասէն, մէկ երեսփոխան Սամաթիոյ թաղէն և մէկ Խասգիւղէն, և կարնոյ, Գարահիսար, Բաղէշի, Եւդոկիոյ, Մանճըլըքի, Հաճընի, Երէշի և Բաթէրի, Աղթամարայ, Զէյթուն և Մարշի, Հալեւ և Անթիոյ, Ռուսնոսի, Գաղատիոյ, Ատանայի և Եգիպտոսի երեսփոխանները: Ասոնց վրայ պէտք է աւելցնել Խարբերդ գաւառն՝ որոյ երեսփոխան Եղաճեան է քիչնտի՝ ի հայրենիս վերագառնալով երեսփոխանական աթոռը թափուր ձգեց, որով այս կարգի պակասելոց թիւը կ'եղնէ տասնեւութի:

Գ. Երկու երեսփոխան մէկ քանի ամիս բացակայ մնալու թոյլտուութիւն խնդրեց և ընդունեց են ժողովէն. բայց սլաւոնեալ ժամանակը վաղուց լրացած, իրենք դարձեալ և միշտ բացակայ մնացեալ են: Ասոնք են Յարութիւն պէյ Տատեան և Սիմոն պէյ Մադատեան:

Դ. Մէկ երեսփոխան՝ որ է Յակոբ Կոստանդ փաշա, Կոստանդնուպօլսէ դուրս տեւողական պաշտօն առնելով, չատ ժամանակէ հետէ բացակայ գտնուեց է:

Ահա սոյն չորս կարգի բացակայ երեսփոխանաց համար դիւանը կ'առաջարկէ:

Ա. Վախճանելոց աեղ անմիջապէս նոր ընտրութիւն հրամայել իրենց թաղերուն:

Բ. Թաղերէն և գաւառներէն դեռ չընտրուած երեսփոխանաց վաղվաղակի ընտրութեան համար ստիպողական շրջաբերական հրաման ուղղել գաւառաց բացի Կարնոյ և Ռուսնոսի, որոց համար մէկ քանի ամիս ևս սպասել պատշաճ կը թուի, և յԵգիպտոս. որ երբէք մեղ երեսփոխան ցոյց տալու հաճութիւն չէ ցուցած, և որոյ տեղ Երուսաղէմէն երեսփոխան մ'ուզել պատշաճագոյն կը թուի:

Գ. Առժամեայ բացակայութեան հրաման ընդունելով՝ միտնջենապէս բացակայ գլուխուղ և Երեք երեսփոխանները:

Դ. Կոստանդնուպօլսէ դուրս տեւողական պաշտօն ընդունող երեսփոխանները հարձակուելով, և տեղերին անմիջապէս որոշեցին ընտրել հրամայել զիրենք ընտրող թաղ կամ գաւառներուն:

Այս առթիւ դիւանը թոյլտուութիւն կը հայցէ ուրիշ երկու խնդրոց վրայ ալ երկու խօսք ընել ձեզ, որ սերտ կապակցութիւն ունենալով երեսփոխանական ժողովոյ մեծամասնութեան խնդրոյն հետ, արժանի են ձեր կատարեալ ուշադրութիւնը գրաւելու, ասոնք են՝

Ա. Եկեղեցական երեսփոխանաց երկու տարին անգամ մը մէկ հնգերորդի նորընտրութեամբ վերանորոգումը, որ ըստ առաջարկութեան Եգիպտոսի վարդապետի՝ բաւական ժամանակէ ի վեր կատարուած չըլլալով, օրինաց դործադրութիւնը կը պահանջուի:

Բ. Աղղային ժողովոյ նստերուն Ղալաթիոյ եկեղեցին գումարումը. որ Մ. Գաթիա մանեան է քիչնտի կողմէն կ'առաջարկուի:

Առաջինին համար Գիւանը մտածելով որ աշխարհական երեսփոխանաց մէկ հնգերորդի նորոգ ընտրութիւնը որ երկու տարին անգամ մը կը կատարի, առաջիկայ 1879 Ապրիլի մէջ պիտի սլաւադի, կ'առաջարկէ եկեղեցական երեսփոխանաց մէկ հնգերորդի նորոգումն ալ նոյն ատենի թողուլ, որպէս զի ամենուն ընտրութիւնը միևնոյն ժամանակ կատարուի, և ամեն տարի ընտրութեան վերաբերեալ խնդիր չյուզուի խոզովի մէջ:

Իսկ երկրորդին համար՝ Գիւանը կը կարծէ որ Գաթիա մանեան է քիչնտի առաջարկութիւնն ընդունելով, ժողովս կը զիջուցնէ Աղղ. երեսփոխանաց երթեւեկը և մինչև մէկ աստիճան կ'ապահովէ իր նստարան մեծամասնութիւնը:

6/13 Յուլիս 1878

Առնապալիր Ա. Առնապալիր և Տեղեկագիր Զ. Ս. Աւագեան Ս. Աւագեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ահա լսեցիք արդիւնքն այն աշխատութեան, զոր Մայր դիւանին յանձնած էիք:

Եթէ ժողովը վիճարանի կ'ուզէ, նախ՝ ընդհանուրին վրայ պէտք է. ետքը՝ մասն առ մասն՝ ըստ օրում ճշաւոր է:

ՄԷՐԵՆԻՄ—ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.— Կարծեմ կէտ մը մոռցուած է. նախորդ նստին՝ շարունակարար բացակայ եղողներուն վրայ ալ խօսուեցաւ և այս կէտն ալ յանձնուեցաւ Գիւանին ուշադրութեան. տեղագրին մէջ այս կէտին վերաբերեալ տրամադրութիւն մը չեմ տեսներ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Կայ. պիտի տեսնէք կարգն եկած ատեն:

Տեղեկագրի Ա. մասին առաջարկութեանց Ա. յօդուածին վրայ դիտողութիւն ընող չըլլալով, նոյն յօդուածն՝ որ է:

« Երեք վախճանեալ երեսփոխանաց տեղ անմիջապէս նոր ընտրութիւն յանձնարարել իրենց թաղերուն »

Անմիջապէս քուէի դրուելով ընդունուեցաւ ժողովէն միաձայնութեամբ:

Իսկ Բ. յօդուածին վրայ, որ է՝

« Թաղերէն և գաւառներէն դեռ չընտրուած երեսփոխանաց վաղվաղակի ընտրութեան համար ստիպողական շրջաբերական ուղղել գաւառաց բացի Կարնոյ և Ռուսնոսի, որոց համար մէկ քանի ամիս ևս սպասել պատշաճ կ'թուի, և յԵգիպտոս, որ երբէք մեղ երեսփոխան ցոյց տալու հաճութիւն չէ ցուցած, և որոյ տեղ Երուսաղէմէն երեսփոխան մ'ուզել պատշաճագոյն կ'թուի »

Յետագայ վիճարանութիւնը տեղի ունեցաւ:

ՂԱԶԱՌՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Եգիպտոսի տեղ կառաջարկուի Երուսաղէմէն երեսփոխան մը ուզել: Երուսաղէմն ալ երեսփոխան չ'ցուցնէր. քանի մ'անգամ փորձուած է արդէն. ուստի եթէ Եգիպտոսի տեղ Երուսաղէմն անցնէր, նորէն երեսփոխան մը պակաս պիտի ունենանք:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ.— Պաշտօնապէս չեմ որ ըսած չունին. հարկ կըլլայ անգամ մը հարցնել Երուսաղէմայ Պատրիարքին:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Երուսաղէմէն ուղղելիք երեսփոխանն եկեղեցական պիտի ըլլայ թէ աշխարհական. ես կառաջարկեմ որ աշխարհական ըլլայ:

ՄԷՐԵՆԻՄ—ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.— Եգիպտոսի տեղ Երուսաղէմէն երեսփոխան մը ուզել կառաջարկուի. այդ երեսփոխանը քաղաքէն թէ միաբանութենէն պիտի ուղղուի:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ.— Երեսփոխանաց բաշխման մէջ Եգիպտոս նշանակուած է նէ՝ միթէ Երուսաղէմն ալ մէջն է: Եթէ չէ՝ այն ատեն իբր օրինական խնդիր ներկայելու է ժողովին:

ՂԱԶԱՌՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Ասկէց առաջ Երուսաղէմ ալ երեսփոխանաց բաշխման ցանկին մէջ կը գտնուէր. Սահմանադրութեան դործադիր Յանձնաժողովն՝ որու անդամ էի ես ալ, փորձեց, և երբ Երուսաղէմ չ'տուաւ՝ վերջուց ցանկին մէջէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Իբրեւ տեղեկաբեր՝ Մայր դիւանի տեղեկագիրը փաստաբանելու պաշտօն ունիմ. եթէ կ'հաճիք ի դիւանէ խօսիմ:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ.— Ներեցէք. կարծեմ թէ ըստ կանոնի ձեր տեղն ուրիշ մը նստելէ ետեւ պէտք է խօսիք:

ԶԱՅՆԵՐ.— Հարկ չ'կայ դիւանէն ելնելու. տեղեկագիրն ալ աշխատանքն ալ դիւանին է. կրնայ ի դիւանէ խօսիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Սահմանադրութեան հաստատութենէն ի վեր Եգիպտոս բռնալ չէ ուզած երեսփոխան մը ցոյց տալ այս

ժողովին . Դիւանն Երուսաղէմէն ուզել առաջարկած է , վասն զի Եգիպտոս անոր թեմին է . Երուսաղէմ ուրիշ թեմեր ալ ունի , ինչպէս Կիպրոս , Դամասկոս , Բայց այս տեղուանքը բազմաթիւ Հայ չկան . թեմապետն Երուսաղէմն է , անոր համար Երուսաղէմէն երեսփոխան մ'ուզել պատշաճագոյն է ըսած ենք . որոշումը ձերն է :

ԱԼԵՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Պէկեան էֆէնտի կըսէ թէ իբր օրինական խնդիր բերուի . որոշ թիւի մը վրայ բաշխուած են երեսփոխանք . եթէ Եգիպտոս փափաք ունէր երեսփոխան տալու , մինչեւ ցարդ տալու էր և առարկութիւն ընելու չէր . և որովհետեւ Եգիպտոս մեծագոյն թիւ ազգայնոց ալ չունի , կրնանք դարձնել Երուսաղէմի իբրեւ կեդրոնին :

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ես չեմ հակառակիր սակայն օրէնքը երեսփոխանաց բաշխում մը ցոյց տուած է մեզ , որուն Եգիպտոս ալ մասնակից կը գտնուի . ինչ պատճառաւ մինչեւ հիմա երեսփոխան չէ տուեր . նէ պէտք է տեղեկանանք . քաղաքական նկատողութեան արժանի կէտ ալ կայ . Եգիպտոս մասն է Տաճկաստանի . մեք անկէ երեսփոխան պահանջելու այնչափ իրաւունք ունինք , որչափ չունինք Մօլտո—վալաքիայէն կամ Սերփիայէն պահանջելու . եթէ ձգենք ու չ'պահանջենք , իբր-առանձնաշնորհեալ անկախ երկիր ընդունած կըլլանք : Այս նկատմամբ ըսի թէ իբր օրինական խնդիր պէտք է յուզուի և ծեծուի այս խնդիրը , Շ անգամ քուէէն անցնի և ետքը ընդունուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երեսփոխանաց բաշխման վիճակացոյցը օրինաբար մէջ տեղ չունի . հանգուցեալ Ռուսիեան էֆէնտիի հեղինակած բաշխման ցուցակին նայելով Եգիպտոսէն ալ երեսփոխան մը ուզուած է բայց նա չէ տուած մինչ ցայսօր . խնդիրը օրինական չ'է :

ՇԱՀԱՊԱԶ Կ. ԷՖ. — Ատենապետ փաշային տուած բացատրութենէն այնպէս կը հասկընամ թէ այն երեսփոխանը՝ զոր Եգիպտոս տալու էր , պիտի ներկայացնէր նաև զԵրուսաղէմն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ո՛չ , ո՛չ , այդ ըսել չ'ուզեցի . Եգիպտոս Երուսաղէմի թեմ է . բայց անոր հնազանդած չ'ունի , մինչեւ անգամ Երուսաղէմի ազգային կալուածներն ալ իւրացոյց և փոխանակ միաբանութեան յանձնելով ազգային հանրական շահուց ծառայեցունելու , մասնաւոր տեղական պիտոյից կը գործածէ անոնց արդիւնքը : Եգիպտոս քաղաքականապէս Թուրքիոյ ալ մասն է , բայց առանձնաշնորհեալ է . տէրութիւնն անգամ չ'միջամտեր անոր ներքին վարչութեան : Ազգը զԵգիպտոսնակ հայազգիս սոյն ժողովոյ իրաւասութեանց ենթարկեալ կը նկատէ . բայց նոքա մինչեւ աստիճան մը ժողովին իրաւասութենէն անկախ լլլալու թեւակոխած են , մեզ երեսփոխան չ'են տար . ուստի մենք ալ անոր տեղ Երուսաղէմէն ուզել առաջարկեցինք :

Տ. ԱՄԲԵՐՈՍԻՈՍ ՎԱՐԴ. — Եգիպտոս պարտադանցութիւն է ըրեր մինչեւ ցարդ երեսփոխան ցոյց չտալով , Երուսաղէմի բոլոր թեմերուն մէջ բազմաթիւ ժողովուրդ ունեցողն Եգիպտոսն է . երբեմն բաժանման ձայներ ալ ելան այն տեղ՝ երբ Առաջնորդն ասկէ չը զրկուէր : Ըստ իս Եգիպտոսի պարտաւորութիւնն է երեսփոխան մը ցոյց տալ հոս . եթէ մինչեւ հիմա ցոյց չէ տուած , պէտք է ստիպենք և յանդիմանել հարկ է նէ յանդիմանենք . և եթէ բանաւոր սխառնաւ մ'ունի՝ թող ըսէ մեզ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես եթէ մտիկ չընէ , ինչ բռնադատիչ միջոց գործածենք :

ՇԱՀԱՊԱԶ Կ. ԷՖ. — Ես կուզեմ հասկընալ թէ Գաւառ ժողովն ինչպէս կազմուած է և Եգիպտոսի մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ունեցած տեղեկութիւններս ըսեմ . Եգիպտոս այնպիսի դերութեան մը մէջ է որ սահմանադրական է չենք կրնար ըսել . Առաջնորդ մը զրկուած է ասկէ . չգիտեմ թէ ասկէ ետքն ալ ասկէ պիտի զրկուի . իւր յարաբերութիւնը Պօլսոյ հետ միայն սա՛ է որ տարուէ տարի քանիքի տուրք մը կուտայ . Երուսաղէմի կալուածոց վրայ բռնացած է . Պատրիարքարանը չէ՛ կըրցած բանեցոսնել Եգիպտոսի վրայ իր իշխանութիւնը նոյն չափով որով կը վարուի ուրիշ վիճակաց հետ . Դիւանն մտածելով որ փոխանակ Եգիպտոսի հետ մարտնչելու և զանի ի կարգ կոչել ճգնելու , որ կասկածելի է , Երուսաղէմէն երեսփոխան մ'ուզել լաւագոյն է , զայն առաջարկեց :

ՇԱՀԱՊԱԶ Կ. ԷՖ. — Իւրաքանչիւր գաւառ երեսփոխան մ'ունի հոս . եթէ ցուցակ մը կայ՝ որ գաւառները կը ներկայացնէ , արդեօք Եգիպտոս ո՞ր թեմերը պիտի ներկայացնէ : Ես կառաջարկեմ որ Եգիպտոսի խնդիրն առ կախ մնայ , մինչեւ իր պարտաւորութիւնն իրեն ճանչցնենք . իսկ քանի որ Երուսաղէմ և թեմերը կան , որ ներկայացուած չեն հոս , անոնցմէ ալ երեսփոխան մը ուզենք . այս ըսել չէ թէ Եգիպտոս ընաւ չտայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ անկարելի է . երեսփոխանաց թիւը կ'ենելայ , և 140 զանցնի : Կուզէք նէ Եգիպտոսի խնդիրը թող մնայ առայժմ ինչպէս որ է :

Այս դիտողութեան ժողովականք հաճութիւն ցոյց տալով , Ատենապետ փաշան քուէի դրաւ և ժողովն միաձայնութեամբ ընդունեց տեղեկագրին երկրորդ յօդուածը , իրաց առեալ Կարին , Բուսճուզ և Եգիպտոս , որոց համար մէկ քանի ամիս ևս պիտի սպասուի :

Գ. Յօդուածն՝ որ է « Առժամեայ բացակայութեան արտօնութիւն ընդունելով մըտնջեալէս բացակայ գտնուող երկու երեսփոխաններն՝ Յարութիւն պէյ Տատեան և Աիմն պէյ Մագուստեան , հրաժարեալ հա-

մարել և տեղերնին անմիջապէս ուեիչներ ընտրել տալ » :

առանց դիտողութեան քուէի դրուելով ընդունեց— ժողովն միաձայնութեամբ :

Նոյնպէս Դ. յօդուածն՝ որ է , « Կոստանդնուպօլսէ դուրս տեղական պաշտօնի մէջ գտնուող մէկ երեսփոխանը՝ Յակոբ Կոստանդիաշա , հրաժարեալ համարիլ և անոր տեղ անմիջապէս ուրիշ ընտրել տալ » :

առանց դիտողութեան քուէի դրուելով ընդունեց— ժողովն միաձայնութեամբ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ասոնցմէ դուրս երեսփոխաններ ալ կայ՝ ըսուեցաւ , շարունակաբար ժողովն բացակայ գտնուող . դիւանն փնտռեց և չգտաւ այնպիսիներ , բայց միայն անոնք՝ որ օրէնքին կը յարմարցնեն ընթացքին , և օրինական պատճառաւ բացակայ կը նշանակուին ներկայութեան տուամարին մէջ . օր մը ասոր վրայ ալ աշխատութիւն կ'ընենք և միջոց մը կը ներկայացնենք ձեզ՝ յուզողութիւն նոյնպիսեաց :

Գանք Մայր դիւանի տեղեկագրին Բ. մասին , որ երկու խնդիր կը պարունակէ . առաջինն է՝ եկեղեցական երեսփոխանաց 2 տարին անդամ մը մէկ հնգերորդի նորընտրութեամբ վերանորոգումը , որոյ համար Ելնիկ վարդապետ կ'ըսէ թէ բնաւ եղած չէ , իսկ դիւանն կը տեսնէ որ ժամանակ մը եղած , և կ'առաջարկէ որ առաջիկայ 1879 տարւոյն մնայ աշխարհական երեսփոխանաց մէկ հնգերորդի նորոգ ընտրութեան հետ կատարուելու համար :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Եկեղեցական երեսփոխանաց մէկ հնգերորդի նորոգման համար վիճակ պէտք է , որ չկայ . ասկէց զատ՝ գաւառական երեսփոխանաց ընտրութենէն ի վեր՝ անոնց ալ մէկ հնգերորդի փոփոխութիւն բնաւ եղած չէ , անոնց համար ալ վիճակ պէտք է որ փոփոխութիւնները կարողաւ գործ դրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գաւառական երեսփոխանք ամբողջացած չեն՝ որ վիճակ ձգենք :

Եթէ ուրիշ դիտողութիւն ընող չկայ, եկեղեցական երեսփոխանաց մէկ հնգերորդի վիճակաւ փոփոխութեան գալ տարւոյ մասին Մայր դիւանին ըրած առաջարկութիւնը քուէի կը դնեմ:

Անմիջապէս քուէի դրուելով այս առաջարկութիւնն ընդունուեցաւ ժողովէն միաձայնութեամբ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԲԱՇԱ.— Կը մնայ Բ. խնդիրն որ է «Ազգային ժողովոյ նստերուն Ղալաթիոյ եկեղեցին գումարումը, զոր Մ. Քափամանեան էֆէնտին կ'առաջարկէ, և դիւանս կը կարծէ որ այս առաջարկն ընդունելով ժողովը կը դիւրացնէ երեսփոխանաց երթեւեկը և մինչև մէկ աստիճան կ'ապահովէ իր նըստերուն մեծամասնութիւնը:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ.— Կարծեմ թէ Ազգային ժողովոյ նիստերուն Ղալաթիայէն հոս փոխադրութիւնը Ս. Պատրիարքին մէկ հրամանաւն եղած է. բնականաբար նորէն Նորին Սրբազնութեան դիմել հարկ է, որ եթէ պատճառը վերցած է, նորէն Ղալաթիա փոխադրուի: Յաւալին այն է որ ժողովս այն ժամանակ պատճառը չէ հարցուցեր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԲԱՇԱ.— Ստոյգ է որ Ազգ. ժողովոյ նիստերը Ս. Պատրիարքին հրամանաւը Ղալաթիայէն հոս փոխադրուած է. այն ատեն հարցուցինք Սրբազանին՝ հրաման է թէ առաջարկութիւն.— ինչպէս ուղէք՝ այնպէս ըմբռնեցէք ըսաւ: Պատճառն ալ սա է որ Քաղ. ժողովը Ղալաթիոյ Մատենադարանը նիստ կընէ եղեր, կերպով մը դուրս ելնել հրաւիրեր են և չեն թողուցեր: Սըրբազանն ալ վշտացեր էր այս բանին համար. ուստի բոլոր ժողովներն ալ Պատրիարքարան պիտի գումարեմ ըսաւ և այն օրէն ի վեր Ազգ. ժողովն ալ հոս գումարուիլ սկսաւ: Պէկեան էֆէնտին կը կարծէ թէ պատճառը չէ հարցուեր և Սրբազանն համոզելու հոգ չէ տարուեր. կը սխալի. ո՛չ միայն հարցուցինք և տեղեկացանք, այլ և միայն Ազգ. ժողովոյ

համար Ղալաթիա գումարուելու արտօնութիւն խնդրեցինք, կանոնին տրամադրութիւնը մէջ բերինք, բայց չ'յաջողեցանք. ժողովը Սրբազանին կամաց հնազանդիլ պարտք համարեց իրեն:

ԵՌԻՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ.— Ինձ ալ փափաքելի է նորէն Ղալաթիա գումարուիլ. բայց ինչպէս Պէկեան էֆէնտին ըսաւ, Սրբազանին հաճութիւնն առնելու է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԲԱՇԱ.— Ըսել է որ ժողովը կընդունի Ղալաթիա գումարուիլ, Սրբազանն չոր հաճութիւնն առնելէ ետեւ: Ուրեմն խորհրդական Խորէն սրբազանին կը յանձնենք որ Ս. Պատրիարքին հետ բանակցի ժողովին փափաքն յայտնելով իւր հաճութիւնն առնէ և յառաջիկայ նիստը գումարէ ո՛ւր որ Սրբազանը կը հաճի զմեզ ժողովել:



Տեղեկագիր Նախաձեռնութեան գիււանին, ի վերայ առաջարկութեան յետաձգման Ազգ. ժողովոյ նիստերուն

Ատենապետ փաշան նորէն կարգաց Նախաձեռնութեան դիւանին տեղեկագիրն, որ նախորդ նստին ատենագրութեան մէջ արձանագրեալ է արդէն:

ՄԷՐԵԱՄ—ԴՈՒԼԻՅ. ԷՖ.— Ազգ. ժողովոյ նստերուն յետաձգման առաջարկութիւնն ըրած ատենս ինչ նշանակութիւն ունէր նէ՛ այսօր նոյնը չուէի: Նախաձեռնութեան դիւանին տեղեկագրոյն թէ՛ տեսութեան և թէ՛ եզրակացութեան վրայ ինչ ըսելիքներ ալ ունենամ պատշաճ չեմ տեսներ խօսելու. բաւական կը համարիմ յայտարարել թէ՛ այն պատճառներն՝ որ ի սկզբան առաջարկութեանս գոյութիւն ունէին, այսօր վերցած են. ժողովին կ'մնայ ընել ինչպէս որ պատշաճ դատի:

Ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով, Նա-

խաձեռնութեան դիւանի տեղեկագրին եզրակացութիւնն քուէի դրուեցաւ, որ է, «Ազգային ժողովոյ նիստերուն տասն և հինգ օրն անպատճառ գումարելու կանոնն ի կիրառուել»:

Քուէի դրուեցաւ:

Ժողովը միաձայնութեամբ որոշեց՝ Ազգ. ժողովոյ հնգետասանօրեայ կանոնական նիստերը շարունակել:

Առաջարկութիւն 3 Երեսփոխանաց

Ուսումնական խորհրդոյ անդամ Յ. Երեսփոխանաց յետագայ առաջարկութիւնը կարդացուեցաւ:

Վսեմալուք Ատենապետ փաշա Ազգային ժողովոյ

Ազգային վարչութեան Ուսումնական խորհուրդն իւր երկամեայ համարատուութեանն առթիւ ինչ ինչ կարեւոր առաջարկութիւններ ներկայացուցած էր, որոց նպատակն էր այնպիսի վիճակի մը մէջ դնել Ուսումնական խորհուրդն, որ կարող ըլլար իրեն յանձնուած պաշտօնը արդիւնաւոր կերպով վարել և չունենար այն դժուարութիւններն ու արգելքները, որ մինչև ցարդ իրարու յաջորդող Ուսումնակ. խորհրդոց ձեռնարկութիւններուն խափան եղած են:

Բայց վասն զի մինչև որ նոյն համարատուութեան տեղեկագիրը պատկառելի ժողովոյդ կողմէ նկատողութեան առնուի իւր կարգին, թերևս բաւական ժամանակ անցնի տակաւին, և վասն զի ներկայացեալ առաջարկութեանց մէջ դրամական մասը ստիպողականութիւն ունի, ուստի Ուսումն. խորհրդանգամներէն ստորագրեալ երեսփոխանքս կը կրկնեմ խորհրդոյ յանձնարարութեամբ յիշեալ առաջարկութիւնն, որ է յանուն դաստիարակութեան ծախուց Գրքոց, Գրքոց մը հաստատել տարեկան 5 դահեկան քանակութեամբ, զոր ամեն ազգային պարտաւոր պէտք է ըլլան վճարելու, և այս տրոց հաւաքումէն հոյացեալ արդիւնքը դնել կեդր. սնուկէն բոլորովին բաժանեալ առանձին և ապահով սնուկի մը մէջ, և մատակարարել վստահելի մարմնոյ մը միջոցաւ, որ կրնայ ընտրուիլ այս պատ. ժողովէն և կամ Ազգ. վարչութեան:

Երբ դաստիարակութեան համար այսպէս առանձին սնուկ մը հաստատուի ապահովեալ, տարակոյս չկայ թէ ազգայինք սիրով պիտի մասնակցին սահմանեալ տրոց, և նուէրներ ու կտակներ պակաս պիտի չըլլան:

Աւելորդ չէ ըսել թէ ինչ պէտքերու պիտի գործածուի հաւաքեալ գումարը. այդ գումարէն բաժին պիտի ելլէ կեդր. վարժարանին, վարժարանաց այցելու տեսուչներու, Ակադեմիոյ մնայուն և գործող դիւանին, կուրսու և արժանաւոր դասատուաց, աղքատիկ դպրոցաց, քննութեանց, մրցմանց, գաւառական յարարերութեանց և այլ ծախուց, զորս հոգալու համար կեդր. սնուկին տուիք դրամն անբաւական է, և իւրեքական միջոցներն որքան ընդարձակ ըլլան, այնքան արդիւնքը մեծ և գոհացուցիչ կ'ըլլայ:

Ստորագրեալ երեսփոխանքս այս դպրոցական տրոց սահմանուել խոնարհարար խնդրելով պատ. ժողովէդ, ի վերջոյ կը բաղձամք որ նկատողութեան առնուի նաև Ուսումն. խորհրդոյ երկամեայ պաշտօնավարութեան այն տեղեկագիրն, որ ներկայացուած է Քաղ. ժողովոյ, և պարունակեալ առաջարկութեանց նկատմամբ պէտք եղած որոշումը տրուի, որպէս զի կարող ըլլայ կրթական պաշտօնէութիւնն ազատիլ արդի կաշկանդեալ վիճակէն և զօրութիւն ունենայ իւր պաշտօնն՝ որ ազգին ապագան կենթադրէ, կատարել էապէս և արդիւնաւոր կերպով. եթէ ոչ՝ Ուսումն. խորհրդոյ տնօրէնութիւններն ու ձեռնարկութիւնները թղթի վրայ պիտի մնան միշտ ապարդիւն, ի մնաս ընդհանուր դաստիարակութեան:

7 Յուլիս 1878 Մնամք ամենայն ակնածանք
Ազգային երեսփոխանք
Բ. Ե. Զ. Է. Բ.
Գ. Ա. Գ. Բ. Բ.
Ծ. Է. Բ. Բ. Բ.

Ատենապետ փաշային առաջարկութեան վրայ ժողովն որոշեց սոյն խնդիրը յղել դաստիարակութեան դիւանին ի նախաքննութիւն:

Ատենապետ փաշան յայտարարեց՝ որ յաջորդ նիստը 15 օրէն պիտի գումարի հոն՝ ուր որ Ս. Պատրիարքը հրաւիրէ. Օրակարգ ունենալով:

Ա. Ընտրութիւն կրօն. և Քաղ. ժողովոյ:
Բ. Պատասխանի Ս. Պատրիարքի՝ երկու տասան երեսփոխանաց հարցման:

Ատենաք գոցուեցաւ ժամ 10 ին.
ԱՏԵՆԱՊԵՏ ԲԱՇԱ
Հ. Ս. Ա. Բ. Բ. Բ.
ԱՏԵՆԱՊԵՏ
Ս. Ա. Բ. Բ. Բ.

[illegible]

1840
 1841
 1842
 1843
 1844
 1845
 1846
 1847
 1848
 1849
 1850
 1851
 1852
 1853
 1854
 1855
 1856
 1857
 1858
 1859
 1860
 1861
 1862
 1863
 1864
 1865
 1866
 1867
 1868
 1869
 1870
 1871
 1872
 1873
 1874
 1875
 1876
 1877
 1878
 1879
 1880
 1881
 1882
 1883
 1884
 1885
 1886
 1887
 1888
 1889
 1890
 1891
 1892
 1893
 1894
 1895
 1896
 1897
 1898
 1899
 1900

Գրքի անունը և հեղինակը
 Գրքի անունը և հեղինակը
 Գրքի անունը և հեղինակը
 Գրքի անունը և հեղինակը

Գրականությունը համարվում է մեզ հայտնի
 ամենաառաջին և ամենապարզագույնը

Handwritten text from a manuscript page, likely a letter or document, written in a cursive script. The text is oriented vertically along the right edge of the page.

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՈՒՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ՄԱԽՈՒՅ ՅԱՏԿԱՅԵԱՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և Ղալաթիոյ
Ս. Լուսաւորիչ Նկեղեցւոյ բանկալը և Հայ գրաւաճառաց քով: